

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.



Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Ցաւելը բաւական չէ. — Ներքին Տեսութիւն. Մամուլ. Վաշխառութեան օժանդակողները. Մի տղեղ երեւոյթ. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գերմանիայի իրաւունքները Թուրքիայի ժառանգութեան վրայ:

ՅԱՆՆԻԸ ԲԱՆԱԿԱՆ ՁԷ

«Մշակի» № 136-ի մէջ մենք տպագրեցինք Բագուի մեր թղթակցի նամակը, որ շատ տխուր խորհրդածութիւնների նիւթ է աւելւում: Մի ժամանակ մեր ինտելիգենցիան գտնէ խօսքով, գտնէ ճաշկերպների ժամանակ, գինու ազդեցութեան տակ, մի շարք բարբիթներ էր ցանկանում մեր գիւղացուն, արհեստաւորին, մի խօսքով — իր աշխատանքով ապրող հասարակ մարդուն: Այժմ գործնական դար է, այժմ ոսկու երանգները հանգիստ չեն տալիս այն իսկ ինտելիգենտին, որը երէկ գինու բաժակ էր առաջարկում աշխատաւոր դասակարգի բարօրութեան համար: Եւ որովհետեւ ոսկին մի կատարելագոյն անսիրտ կուռք է, մի այնպիսի հասկացողութիւն է, որ հարկադրում է ամեն ինչ մոռանալ, ուստի նրա երանգներով խորովող ինտելիգենտը հասաւ այն դրութեան, որ կողոպտում է երէկվայ իր բարեկամի, աշխատաւոր մարդու գրպանները...

Երէկ դուք ճառախօսներ էիք, պատրաստ էիք հազարաւոր զեղեցիկ խօսքեր ասել — և դուք լաւ էիք. եթէ ձեր դատարկ խօսքերից աշխատաւոր մարդը ոչինչ օգուտ չէր ստանում, գտնէ վնաս էլ չուներ: Այսօր դուք ծաղրում էք այն միամտութիւնը, որով երէկ ճառեր էիք ասում. այսօր դուք գործնական մարդ էք, ուզում էք հարստացնել ձեզ և դիմում էք նոյն աշխատաւորին, խաբուսիկ յոյսերով խլում էք նրա ինտելիգենտ կօպէկները, որոնք քրտինքից են գոյացել և ապա ճանապարհում էք նրանց, ասելով թէ զբանը չեղաւ: Եւ այնուհետեւ չէք

էլ նայում թէ ինչ է ձեր արածը, չէք էլ տեսնում թէ ինչ են դառնում ձեր զոհերը:

Երբ էիք դուք լաւ: Երէկ թէ այսօր: Խոստովանում ենք, մենք երէկ էլ բաւական չէինք ձեզանից. բայց գտնէ երէկ դուք անմեղ Ֆրագորներ էիք, գտնէ ոչինչ վնաս չէր կար ձեր ծառերից: Իսկ այսօր...

«Մշակի» մէջ շատ անգամ առիթ է եղել խօսելու այն ընկերութիւնների մասին, որոնք կազմվում էին Բագուում գլխաւորապէս մշակ է արհեստաւոր դասակարգերի դրամով: Այն տեղւոյն իրաւանցումը, որ մի ժամանակ ոսկի հէքեաթներ էր և առասպելներ էր տարածում մեր երկրի զանազան կողմերում, յարուցանելով ամեն մէկի մէջ հարստանալու, մեծ գումար ձեռք բերելու մի սաստիկ տենչանք, — այդ իրարանցումը մենք միշտ համարում էինք մի արհեստական, ուսցրած բան և խորհուրդ էինք տալիս, որ շատ չոգեւորվեն, որ բարոյական մաքուր միջոցներով գործ տեսնեն սկսողները: Մենք գանգատներ տպեցինք, լայց, անկողնիապահութեան համար, տպագրեցինք և հերքումներ: Բայց այսօր, երբ Բագուի նաւթային փութը նստել է, երբ արդէն կարելի է իմանալ սկսված բազմաթիւ ձեռնարկութիւնների կշիռն ու արժանիքը, մենք չենք կարողանում թաղցնել մեր խորին վիշտը, որ մէջտեղ տուժողները և սաստիկ տուժողները, կողոպտվածները մեր հասարակ աշխատաւոր մարդիկն են և այդ դրութեան հասցրել են նրանց այնպիսի ձեռնարկութիւններ, որոնց զեկաւարները, ինչպէս գրում է մեր թղթակցը, մեծ մասամբ ինտելիգենտ մարդիկն են: Դա մի կատարելա յուսահատական երեւոյթ է:

Բայց ինչպիսի դիրք պէտք է բռնել այդ երեւոյթի դիմաց: Արձանագրել փաստը, ցաւել նրա վրա բաւական չէ: Մեր հասարակութեան բարոյականութիւնը շատ կը վնասվի, եթէ այդպիսի արարքները ոչինչ համարվեն, մոռացվեն: Աւերմն, այստեղ էլ, ինչպէս ամեն մի հասարակական տղեղ երեւոյթի դիմաց, հարկաւոր է կը-

ռիւ: Եւ այդ կռիւն պարտաւոր են վարել այն ինտելիգենտ մարդիկ, որոնք կողմնակի դիտողների դեր են կատարում: Որոնք փող վատակելու համար դեռ այնքան անկման չեն հասել: Որքան էլ քիչ լինի այդ տեսակի դիտողների թիւը, դարձեալ կարելի է կուռք և աշողութեամբ կուռք: Հօ այժմ հին, զբարի ժամանակները չեն, երբ չէր կար տպագրական խօսք, երբ գոհը ձայն բարձրացնել չէր կարող և հասարակութիւնը կարծիքի տէր չէր: Այժմ պէտք է, որ իւրաքանչիւր մարդ զգայ պատասխանատուութիւն հասարակական խղճի առաջ, իսկ այդպիսի մի հսկողութիւնը, այդպիսի մի անողոր զատաստանը կարող է իրական, խիստ լինել միայն այն դէպքում, երբ նրա առաջ շատ կը հանկուս յանցաւորներ, երբ զատապարտութիւնը կը կատարվի հրապարակով, առանց կողմնակալութեան, այնպէս, ինչպէս պահանջում է մարդկային ազնւութիւնը:

Աւերմն, չը բաւականանք ցաւելով... Մեզ համար շատ և շատ ծանր է մի փրկարար, սխալիցնող կռիւ հրաւիրել ինտելիգենցիայի այն մասի դէմ, որ շահադիտական նպատակներով ինքնամոռացութեան մէջ է ընկնում: Դենք, որ միշտ հաւատարմած ենք եղել, թէ ինտելիգենտ մարդը կարող է և պարտաւոր է մտածել իր զրոյսներ եղբոր, աշխատաւորի մասին, ծանր զգացմունքով ենք համոզւում այն եզրակացութեան, որ անբարոյական շահամոլութիւնը սկսել է ապականել և ինտելիգենցիան, որ այդպիսով մի վնասակար տարր է դառնում: Աւերմն և պէտք է կուռք նրա դէմ: Բայց ի՞նչ արած: Մի հատ է բարոյական օրէնքը ամենքի համար: Մի հատ է այն չափը, որով պիտի չափվեն մարդկային գործերը: Մենք պէտք է ասենք մեր փաշտօն ինտելիգենցիային: Հարստացե՛ք, բայց մի՛ մոռանա՛ք բարոյականութիւնը, առանց որի դուք կարող էք հրէշներ դառնալ, չը նայած ձեր դիւլիսներին, ձեր երէկվայ ձառներին, ձեր ամբողջ արտաքին փայլին ու մաքրութեան...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ամենօրեայ լրագրութեան խօսք ու զրոյցի մեծ մասը ինչի մասին է, եթէ ոչ բաղադրելի առողջապահական դրութեան մասին: Ցանկալի տարիների ընթացքում ազմուկ ու բողոքներ են բարձրացնում հասարակական գործիչները, բըժշկական ընկերութիւնները, բայց ոչ միայն նոյն իսկ կրիայի առաջդիմութիւն չէ նկատվում բաղադրելի կենտրոն բարեկարգման մէջ, այլ և կատարեալ անշարժութիւն է տիրում Իսկ բողոքող ձայները շարունակում են նույն. և ընթերցողներին համար դիտութեան պահանջների ու իրականութեան մէջ եղած անհաշտ տարբերութիւնը այնքան սովորական, հասարակ մի բան է դարձել, որ թուում է թէ դիտութիւնը այնքան պահանջներ անում է անիրաւացի կերպով, չափազանցնելով ամեն ինչ, և խօսում է լոկ խօսած լինելու համար, կարծես այն պատճառով միայն, որ ցոյց տալ թէ ինքը դիտութիւն է: Այդ խորին անտարբերութիւնը, որի մէջ թաղված է մեր հասարակութիւնը, նպաստում է միայն այն բանին, որ անուշադրութեան է մատնվում մարդկային կենտրոն և բարեբախտութեան համար այնքան անպիտան նշանակութիւն ունեցող հարցը: Ահա ինչ որ ամենօրեայ բարոյները, բողոքները չեն կարողանում հասկացնել թմբած հասարակութեան, գալիս է ցոյցով թեքով ցոյց տալու վիճակագրութիւնը: «С. Петерб. Вѣд.» լրագրում մի մեծ յօդուած է տպված, որ ապացուցանում է, թէ Ռուսաստանի շատ բաղադրելի ազգաբնակչութիւնը աստիճանաբար ջնջվում է. այդտեղ մահացումը այն աստիճան է զարգացել, որ մեռնողները ծնվածներից շատ են լինում: Այդպէս, Սամարա և Սիմբիւրսկ քաղաքներում տարին հազար մարդուց պակասում է 4-ը, Սարատովում 2, Կազանում 1, Սարատովում 1 1/2 և այլն: Ի հարկէ հաշիւ առնված են այնպիսի տարիներ, երբ համաճարակ հիւանդութիւններ չը կան:

Մի խօսքով, վիճակագրութիւնը միջկրթական պատկեր չէ նկարում: Փաղաքներն է թափվում զուգական առողջ ազգաբնակչութիւնը, բայց նա բոլորովին չէ կարողանում քաղաքացիների մէջ եղած սաստիկ մահացման առաջին առնել. ոչ մի օրգանիզմ չէ կարողանում տանել քաղաքային կենտրոնի հակառողջական պայմանները:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԹԻՒՐԿԻԱՅԻ ԺԱՌԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ

(Deutschlands Ansprüche an das Türkische Erbe).

Ի նկատի ունենալով այն հետաքրքրութիւնը, որով այժմ վերաբերվում են ամեն տեղ Գերմանիայի ասիական քաղաքականութեանը, աւելորդ չենք համարում ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին այդ քաղաքականութիւնը արտայայտող գերմանական գրքայիններից մէկի բովանդակութեան հետ, որի վերնագիրը դրված է այս յօդուածի գլխին և որի առեւտրէն թարգմանութիւնը միայն ունենք ձեռքի տակ:

Այդ գրքովը հրատարակել է «Alldeutsche Verband»-ը (Համագերմանական ընկերութիւնը), որի նպատակն է պաշտպանել և համախմբել գերմանացիներին ամբողջ աշխարհում և տարածել գերմանական գաղափարը ամեն տեղ: Այդ ընկերութիւնը ունի 9000 անդամ և հրատարակում է, բացի այդ տեսակ գրքայիններից, և մի շաբաթաթերթ՝ «Alldeutsche Blätter» անունով:

1896 թվի յունվարի 18-ին, ատում է գրքային կազմողը, գերմանական կայսրութեան քառհիսնամեակի օրը, Վիլհելմ II կայսրը իր ճառում յայտնեց այն միտքը, թէ Գերմանիան այստեսեռն դարձել է համաշխարհային պետութիւն, որի հպատակները ապրում են աշխարհի բոլոր մասերում, տարածելով ամեն տեղ գեր-

մանական գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը, ուստի ևս աւելի կարևոր է, որ այդ մեծ գերմանական պետութիւնը սերտ կապված լինի իր հայրենի հետ: Բացի այդ՝ կայսրը չեղտեց նոյնպէս, թէ անհրաժեշտ է հոգալ, որ ամեն տարի օտար երկրներում նոր հայրենիք փնտռող հազարաւոր գերմանացի դաղթականները չը կորչեն իրանց ազգի համար:

Գրքայինի հեղինակը երակտ ընդունելով Վիլհելմ կայսրի այդ խօսքերը, բացատրում է իր ընթերցողներին գերմանացիների բռնելիք դիրքը Փոքր-Ասիայում:

Գերմանիայի ազգաբնակչութեան աճումը ամեն տարի կազմում է 600,000: Արտագաղթութիւնը անհրաժեշտ է: Բայց գերմանացիք դաղթում են մեծ մասամբ Ամերիկայի Միացեալ-Նահանգները, ուր տնտեսական և ազգային տեսակետից բոլորովին կորչում են իրանց մայր-հայրենիքի համար: Գերմանիայի գաղութները, միւս կողմից, կարող են առ այժմ ընդունել միայն գերմանացի դաղթականների փոքրամասնութիւնը: Ի՞նչ պէտք է անել: Պէտք է նոր գաղութներ ձեռք բերել և պէտք է ուղղել դաղթականական հոսանքը այնպիսի երկրներ, որոնք կարող են ապագայում ընկնել Գերմանիայի իշխանութեան կամ գոնէ նոյնապարտութեան տակ:

Գերմանիայի քաղաքագէտները կարծում են, թէ Փոքր-Ասիան է ամենայնաւոր երկիրը այդ տեսակետից:

Յիշելով, որ նշանաւոր գերմանացի տնտեսագէտները և մտածողները, ինչպէս կոմս Օլտիկէ, Ֆրիդրիխ Լիստ և Վիլհելմ Րոշեր, վաղուց մատնացոյց են արել Փոքր-Ասիայի կարևորութեան վրա գերմանական դաղթականութեան տեսակէ-

տից և որ այժմ նորից ազգաբնակչի գերմանացիները սկսել են մեծ ուշադրութիւն դարձնել այդ հարցի վրա, հեղինակն ասում է հետևեալը:

— Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մենք ամենին ջանկարծիւ չուենք, որ Գերմանիան այդ հողերը ձեռք բերելու համար սկսի հետևել Թուրքիայի բաժանումը նպատակակէտ ունեցող պատերազմախրական քաղաքականութեան: Սակայն, միւս կողմից, զեպքերի ընթացքը արևելքում անկասկածելի է դարձնում, որ այն ծանր ցնցումները, որ հետզհետէ աւելի և աւելի յաճախ է կրում Թուրքիան իր զանազան մասերում, վաղ թէ ոչ կը հասցնեն նրան վերջնական քայքայման: Գերմանական քաղաքականութիւնը պէտք է ամենից առաջ վճռի այն հարցը, թէ Թուրքիան նախ քան վերջնապէս բաժանվելը պէտք է արդեօք զտնվի մի որոշ ժամանակ մի որ և է եւրօպական պետութեան կառավարութեան ներքոյ, ինչպէս այժմ Նիկիտոսը, թէ ոչ: Ինկատի ունենալով այդ, մենք ուզեցինք նորից դարձնել ընդհանուր ուշադրութիւնը այն բանի վրա, որ Գերմանիան կարող է Թուրքիայի բաժանման ժամանակ ձեռք բերել նրա հողերի մի մասը, ահազին շահ ստանալով այդպիսով պետական տեսակետից: Այն անտօլիայի ազգաբնակչութիւնը, ոչ Միջագետքում ու Ասորիքում ապրող սակաւաթիւ արաբները չեն կարող ներկայացնել դժուարութիւններ գերմանական և իր գերմանական, անշուշտ արդարադատ վարչութեան, որովհետեւ այդ վարչութեան հաստատվելով մեծ զարկ կը ստանան այնտեղ երկրի արդիւնաբեր ոյժերը: Այդ բանին գրաւական կարող է լինել մինչև Անգորա հասցրած Անատոլիական երկաթուղին, որ կառուցված է գեր-

մանական աշխատանքով ու զբաղակցում և որ արդէն սաստիկ նպաստել է մերձակալ տեղերի բարօրութեան աճման: Այդ երկրի կլիման և հողը ճոխ ասպարէզ են լաւում գերմանական դաղթականութեան առաջ, և գերմանացու աշխատասիրութիւնը, հովանաւորված զօրեղ գերմանական վարչութիւնից, կարող է դարձնել այդ երկիրը այնպիսի մի գաղութ, որ կունենայ Գերմանիայի համար նոյն նշանակութիւնը, ինչ որ Հնդկաստանը Անգլիայի համար: Սակայն այդ երկիրը ցանկալի է ձեռք բերել ոչ միայն այն պատճառով, որ նա կը տա Գերմանիային անհամար հարստութիւններ, այլ և ուրիշ շատ հիմաւոր պատճառներով: Գերմանական ազգը պէտք է անպատճառ յարմարութիւն ունենայ բազմապատկ: Այլապէս նա շատ յետ կընկնի իր մրցորդներից: Հիմնվելով վիճակագրական փաստերի վրա, կարելի է հաստատ ենթադրել, որ ապագայ դարի վերջում անգլո-սաքսերի թիւը կը հասնի 927 միլիոնի, ռուսներինը՝ 275 միլիոնի, իսկ գերմանացիներինը միայն 146 միլիոնի: Այդ տեսակետից հետաքրքիր է Անգլիայի քաղաքագէտ Չարլզ Գիլիի հետեւեալ կարծիքը, որ նա յայտնել է իր «Problems of Greater Britain» գրքում: «Հին աշխարհի մեծ ազգերը, ատում է Գիլի, սահմանափակված են իրանց երկրներին մէջ, որոնք գտնվում են բարեխառն կլիմայի գոտիում: Պրանսիան, Գերմանիան և ուրիշ նըրանց նման պետութիւններ կարող են յուսալ միայն աննշան դեր խաղալ երկրի յետագայ քաղաքականութեան մէջ: Ապագան պատկանում է միայն մեր ցեղին, Անգլիային ու Միացեալ-Նահանգներին, և Ռուսաստանին, որ միակը եւրօպական ցամաքային տէրութիւննե-

Էլիվադինը կորցնում է 30—40,000 ռ. արժու-
ղութեամբ կայք... Դա բաւական չէ... բաժան-
ման ժամանակ թէն աշխատել են, որ գիւղերը
մնան վանքին, այնու ամենայնիւ, շնորհիւ ճար-
պիտութեամբ կարգաված գնահատման, կալուա-
ծառէրերի ձեռքն է ընկած և վարելահողերի մի-
մասը: Խաւար գիւղացիք, չը գիտեմալով որ
ազնւականները ոչ մի իրաւունք չունեն իրանց
վճարած տուրքը բարձրացնելու, անպայման հը-
րաժարվում են կատարված բաժանումը ընդու-
նել և կոնսիստորիային ու Կաթողիկոսին բողո-
քելուց յետոյ, իրանց շահերը պաշտպանելու հա-
մար՝ դիմում են դատականներին օգնութեան:

Հայ մարդկանցից գերեզմանների վրա աշ-
ուր կելու է կատարվում հայ կալուածատէրերի
ու վանքի և հայ գիւղացիների մէջ, այն գիւղա-
ցիներին, որոնք իրանց արեւմտի աղաւառ են պա-
հել նուիրական գերեզմանները թաղարների
ճանկերից... Ինչպէս պիտի այդպէս լինէր: Միթէ
բաժանման ակտի մէջ չէր կարելի նշանակել որ
գիւղացիները կալուածատէրերին (վանքին թէ
ազնւականներին) վճարելու են առաջվայ տա-
սանդուղը և ոչ աւել: Միթէ չէր կարելի վանքին
ապահովել իր 9,000 դեսիաւորներ: Միթէ չէր
կարելի չողի գնահատումը խնամիրական կարգե-
րից ճանել և յանձնել շահ չունեցող անձնու-
ղիկներին: Վերջապէս միթէ չէր կարելի ամ-
բողջ կալուածքը յանձնել որոշ դուստրով բոլոր
4 գիւղերին, որպէս զի ազատեն ժողովրդին
զանազան «կառավարչներէր», որոնք մինչև
օրս վանքին ոչինչ չեն տուել:

Մի կարգիս: Միթէ մեր վանական կալուած-
ները հաւաքաբար չաւարտ չը պիտի նշանակ-
վի վերջապէս մի ձեռնհաս յանձնաժողով, որը
եթէ չաւարտէր վանքի եկամուտը, գոնէ ապա-
հովանէր գիւղացիներին դրութիւնը: Միթէ դա-
տապարտելի չէ, որ մինչև օրս վանական կա-
լուածները վրա աղարւմ են գիւղացիներ կիսա-
ճորտական դրութեան մէջ:

ՆԱՍՏԱԿ ԳՍՆԱԿԻ ԳԱՆԱՌԻՑ

Զարգացում, յուլիսի 19-ին
Յուլիսի 10-ին տոնակէտէր մի քանի իշխան-
ներ ինչու միասին ընդունել են հասարակութեան
իւր մուտքի հաշիւները: Զարգացումը Գանձակի
գաւառի շատ թէ քիչ աչքի ընկնող և մեծ գիւ-
ղերից մէկն է, սակայն չեմ կարծում, որ ուրիշ
գիւղերում հասարակութեան գումարները այս-
պէս անհաշիւ և անկանոն ծախսվելին, ինչպէս
մեղանում: Անա օրինակներ. 1898 թ. I կիսա-
մեակի հարկը արդէն երկու տարի է, որ հաւա-
քել են, պէտք է ուրեմն այդ հաշիւները վեր-
ջացնելին II կիսամեակի հարկը հաւաքելու ժա-
մանակ, սակայն մինչև օրս նա անշարժ մնում
էր: Մօտ 2000 ռուբլի (բացի արքունական հար-
կը, որը իր ժամանակին միշտ վճարում են)
մինչև օրս եղել է հարկ հաւաքողի մօտ. իսկ
երկու տարի առաջ ինքը գիւղացու զրուխը
թակել, ուրիշից ստիպուով վերցնել են տուել
այդ փողերը, թէ ինչ է՝ ժամանակին պէտք է
պատրաստ լինի: Բայց ի՞նչ է հարցնողը, ի՞նչ
հաշիւ պահանջողը. ինչպէս ժողովուրդն ասում է.
«Անշուք զեղ են ընկել, անիկտ ման են գալիս»:

Սակայն սա դեռ արեւմտ նկատելի չէր, այլ
զրուխը այն է, թէ ինչպէս է նա իր ծախսած
գումարի հաշիւը տալիս. օրինակ գրում է, —տա-
նուէրներն տուելիս 40 ռուբլի. թէ ինչու, ինչ
գործի համար, յայտնի չէ. մի երկու դէպքում
էլ այն անձնատուութիւնները, որոնք ներկայ
էին և որոնց վրա փող էր գրած. ասեցին, որ
այդքան փող չեն ստացել, և պահանջեցին, որ
ապացուցվի. սակայն ով էր նրանց լսողը, նը-
րանց վրա ուշադրութիւն էլ չը դարձրին և շա-
րունակում էին ասել, ինչը գրած է, գրած է,
սուտ չէ զրեւ: Այդպէս էլ վերջացան նախ-
կին տարիների հաշիւները: Այս 1899 թ.ի ա-
ռաջին կիսամեակի համար պէտք է հաւաքեն
2578 ռուբլի 52 կօպէկ, որից եթէ դուրս գանք
պետական տուրքը 1464 ռուբլի, գիւղական
ծախսերի համար կը մնայ 1114 ռուբլի 52 կօ-
պէկ: Բացի այս, գիւղը այդ յունվարից յետոյ
զանազան աղբիւրներից մուտք է ունեցել 1100
ռուբլի, որը նոյնպէս ծախսվել է, այնպէս որ
այս 1899 թ.ի առաջին կիսամեակի ծախսերը
հասնում է 2214 ռուբլի 52 կօպէկ. թէ ինչի
վրա է ծախսվում այս գումարը, Աստուած գի-
տէ: Մինչդեռ գիւղը չունի ուսումնարան, որ-
տեղ գիւղական մանուկները գրեւ-կարդալ ան-
գամ սովորեցին: Բոլոր անկանոնութիւնները
առաջ են գալիս կարգին և հասկացող տանու-
տէր չունենալուց. եթէ մի խելքը—զլխին տա-
նուէր ունենալիք, ամեն բան կը կարգադրէր,
ամեն բանի մասին իր ժամանակին հող կը տա-
նէր, սակայն ինչ արած, որ մարդ չը կայ:

Աւելորդ չէր լինի մի քանի խօսք էլ ասել
մեր գիւղական շտեմարանի մասին: Մեր նորոն-
ժայ Գ. քահանայ Մանասանի նախաձեռնու-
թեամբ մի քանի տարի առաջ հիմնվել է գիւ-
ղական շտեմարան, սակայն այս մի երկու տա-
րի է, որ նա մոռացութեան է տրված. ինչպէս ե-
րևում է տէր-Տօր եռանդը պահպանել է: Սակայն
լաւ կը լինէր, որ օգտվէին այս տարվայ առա-
տուութիւնից և շտեմարանը կրկին կարգի բերէին:

Ս. Մանասանի

ՆԱՍՏԱԿ ԱՍԼԻՔԱՒԱՐԻՑ

Յուլիսի 28-ին

Մեր գաւառում, արտերի վրա, բացի հացի
բզէզից (anisopia austriaca), մեծ բանակու-
թեամբ երևացել է և մի ուրիշ միջատ, մոխրա-
գուն կամ սև գոյնով, որ չը հասած հասկի հիւթը
ծծելով նոյնպէս մեծ աւերածոյններ է պատճա-
ռում: Հէնց այդ միջատիցն էի սխալմամբ հացի
բզէզի տեղ ուղարկել «Մշակի» խմբագրութեանը:
Մեր կարծիքով դա բաղիճներ ընտանիքին է
պատկանում և շատ նման է ԽՈՅՈՅԱՅ չերեպաշա
կամ ГОТТЕНТОСКИЙ КЛОПЬ անունով յայտնի միջա-
տին, որը իր վնասներով մի քանի տարի առաջ
գրաւել էր հարաւային Ռուսաստանի գիւղատն-
տեսներին ուշադրութիւնը: Անս այդ սև ու մոխ-
րագոյն բաղիճները և հացի բզէզը, որ Գանձա-
կի նահանգի հայ գիւղացիներին յայտնի է սիւ-
միւր գա անունով և որից ներփակած ուղար-
կում եմ մի քանի օրինակ, մեծ վնասներ են
պատճառում մեր գաւառի գիւղատնտեսութեան:

Վերջին օրերս, հունիքը սկսվելուց յետոյ, յորդ
անձրևներ եկան, որ կօշտեն սարերի չը հա-
սած արտերին. սակայն կարկուտն էլ տեղ-տեղ
բաւական վնասներ պատճառեց: Այսպէս ուրեմն
մեր գաւառի արտերը այս տարի վնասվեցին
կամ երաշխից, կամ միջատներից և կամ կար-
կուտից, այնպէս որ սպասած հունձը չենք ունե-
նայ: Նրաշտի պատճառով խոտը նոյնպէս սա-
կաւ է. թանգութիւն է սպասվում:

Սալլիման

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիայի հայերը մտադիր են այս տարվայ
հոկտեմբերի 17-ին տօնել պ. Մատթէոս Մա-
մուրեանի գրական և մանկավարժական գոր-
ծունէութեան յիսնամեայ յօրեկանին: Այդ պատ-
ճառով արդէն կազմված է մի մասնաժողով,
որի նախագահն է Զմիւռնիայի հայոց առաջ-
նորդ Մելիքեանի արքեպիսկոպոս Մուրադեանը:
Մատթէոս Մամուրեանց հին դպրոցի գործնե-
րից է և մասնակցել է մեր կովկասեան մասնու-
լին, մի ժամանակ աշխատակցելով «Կուռնի» ամ-
սադրին: Իբրև հին սերնդի ներկայացուցիչ, նա
«Մշակի» հակառակորդն էր մանաւանդ կաթո-
ղիկոսական ընտրութիւնների ժամանակ: Բայց
այդ հանգամանքը չէ արգելում մեզ արձագանք
տալ յօրեկանական մասնաժողովի հրաւերին,
որի մի օրինակն էլ մեզ է ուղարկված: Այդտեղ
համառօտ կերպով պատմված է պ. Մամուրեա-
նի գործունէութիւնը՝ սկսած 1850 թականից:
Անս այդ տեղեկութիւնները. «Պ. Մամուրեան
տեսուչ կարգում է Կ. Պոլսոյ Խաչգիւղի Ներ-
սիսեան վարժարանին. հիմնադիր եղած է Կ.
Պոլսոյ հայոց պատրիարքարանի դիւանական
կարգադրութեան, որոյ հասուցած պաշտօնեա-
ններից է այսօր՝ նշանաւոր դիւանադպր Բար-
թուլ էֆ. Թէրեան: Պ. Մամուրեան նախկին
«Մաղիկ» թերթի խմբագրութեան մասնակցու-
թեան զատ՝ յիշմիր է ի Կ. Պոլսոյ, այսօր շուրջ
30 տարի է, որ կը հրատարակէ «Արեւելեան
Մամուլին»: Պ. Մամուրեանի գրական երկասի-
րութիւններն բազմաթիւ են՝ վիպական, նամա-
կագրական, թարգմանական, թատերական, ման-
կավարժական, պատմական, իմաստասիրական
և այլն: Պ. Մամուրեան Խաչգիւղի վարժարանի
տեսչութեանէն դատ՝ 1867 թականիցն է ի վեր
անընդհատ զատարարութեան պաշտօն վա-
րած է ի Զմիւռնի, Մեսրոպեան և Հուլիսի ման-
կավարժարանց մէջ, որպէս տեսուչ և ուսուցիչ
գիտութեանց և լեզուացի: Այժմ պարենը իր
տկաւորութեան պատճառով և բժիշկների խորհը-
րով հեռանում է իր ընտրած ասպարէզից: Ան-
շուշտ թիւրքահայերի մէջ վիպականները մի
համակրելի բացառութիւն են կազմում, վար-
ձատրելով իրանց ուսուցչի և գրագէտի այդքան
երկար ժամանակվայ ծառայութիւնը յօրեկա-
նական տօնախմբութեամբ:

Մեզ հաղորդում են, որ պ. Խ. Կարա-Մուրզա
օգոստոսի 7-ին «Զուարճութիւն» և Օգոստոս թատ-
րօնում կը տա իր առաջին կօնցերտը: Խոմբը
բաղկացած է երկու սեռի անձինքներից, թուով

70: Կը մասնակցէ տնօր Գալուստ Պոյաճեան:

Պետերբուրգում նորերս հրատարակվել է, մեր
հայրենակից պրօֆէսոր Վամբարեանի խմբա-
գրութեամբ, հասարակական—իրաւաբանական
գիտութիւնների վերաբերեալ յօդուածների մի
ժողովածու. (Сборник по обществено-юридиче-
ским наукам. Выпуск первый. Цѣна 1 руб.),
որի մէջ, ի միջի այլոց զետեղված են Մակսիմ
Կովալեւսկի յօդուածը «Сравнительно-историче-
ское правоѣдѣніе» և Վամբարեանի յօդուածը
«Право въ его основныхъ моментахъ»: Ժողովա-
ծուի նպատակն է ժողովրդականացնել հասա-
րակական—իրաւաբանական գիտութիւնները:

Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան
Կովկասի բաժինը հրաւեր է ստացել մասնակ-
ցելու Բուշուլում ներկայ տարվայ աշնան տե-
ղի ունենալիք զեղարուեստական-արդիւնադո-
ւական ցուցահանդէսին, որը բացվում է առե-
տրական և երկրագործական միջնորդութեան
կարգադրութեամբ, բոլորական Ֆերդինանդ իշ-
խանի հովանաւորութեան տակ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են,
որ բժշկական դեպարտամենտը մշակել է արդէն
զեղերի համար նոր սակագին և մտադիր է ա-
ռաջարկել՝ գործադրել այդ սակագինը մայ-
րաքաղաքներում՝ ներկայ տարվայ սեպտեմբերի
1-ից, իսկ Ռուսաստանի ուրիշ քաղաքներում՝
հոկտեմբերի 1-ից: Կովկասում, Սիբիրում և Մի-
ջին-Ասիայում նոր սակագինը մտցնելու վերա-
բերմամբ առանձին կարգադրութիւն կը լինի:

Ռուսաց Աստղաբաշխական ընկերութեան կից
կազմակերպված է մի առանձին յանձնաժողով՝
տոմարի բարեփոխութեան հարցը վճռելու հա-
մար:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-
թիւնը առաջարկել է շրջանային հոգաբարձու-
ներին նպաստել ձեռքի աշխատանքներ մտցնե-
լու այն դպրոցներում, որտեղ երեխաները պատ-
րաստվում են ոչ թէ գիտական, այլ գործնա-
կան գործունէութեան համար: Այդ դէպքում՝
աւելի ուշադրութեան արժանի են քաղաքային
և գիւղական երկդասեան դպրոցները:

Մայրաքաղաքների լրագիրները հաղորդում են,
որ ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-
թիւնը թիւ 1 և տունը 1872 թ.ի մայիսի 31-ի օ-
րէնքով հիմնված բոլոր քաղաքային դպրոցնե-
րում, բացի միջնասեան և երկդասեան դպրոցնե-
րից, իրաւունք առ կողմնակի անձանց՝ քննու-
թիւն բռնել աւարտողներին հետ:

Մեզ հաղորդում են, որ չորեքշաբթի օր, յու-
լիսի 28-ին, Կարսի երկաթուղու գնացքը, որը
գնում էր Թիֆլիսից դէպի Ալեքսանդրօպոլ,
վերջինիցս 7 վերստ հեռաւորութեան վրա,
խորտակվեց, որի ժամանակ կոտորվեցին 4 վա-
գօններ և ծանր վէրքեր ստացան 4 հոգի:

ԱՍԼԻՔԱՒԱՐԻՑ մեզ գրում են. «Ներսիսական
գութանների վարկը սկսել է բարձրանալ մեր
գիւղացու աչքում. վերջերս շատ գիւղացիներ
դիմում են մեր հարկային տեսչին, որ գութան-
ներ բերել տայ. վերջինս էլ, մի քանի գութան-
ներ բերել տալուց յետոյ՝ տեսնելով, որ ան-
յարմար է հատ-հատ բերել տալը, զիմել է Գիւ-
ղատնտեսական ընկերութեան խորհրդին, որ
գութանների պահեստը ճիշդ բացվի Մայրաքա-
ղաքում: Ընկերութիւնը ընդունել է պ. Գուկա-
սեանի այդ առաջարկութիւնը և արդէն բա-
նակցութիւններ է վարում պահեստի վերջնա-
կան կազմակերպութեան մասին: Ծնորհաւորում
ենք պ. Գուկասեանին այդ նոր համակրելի գոր-
ծը և ցանկանում ենք կատարեալ աշդուլթիւն:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մայիսի 26-ին,
Խանդավերեանի թատրոնական դահլիճում կա-
յացաւ հայոց զերասանական ընկերութեան
վեցերորդ ներկայացումը, ի նպատակ տիկին Զա-
բէլի: Խաղային «Երկրորդ երիտասարդութիւն»
դրամա 4 գործ., հեղ. Նեվեմիւրի «200,000» վո-
զովիլը: Վարկանքնա Սէլեւստրօֆայի պա-
տասխանատու դերը յանձնված էր օր. Խիթա-
բեանին: Ծնորհալի օրերովը այդ երեկոյ աննը-
ման էր իր դերում, այն ինչ «Արդիւնաւէտ
պաշտօն» կօմէդիայի մէջ Լիլիկայի դերում
շատ սառն տպաւորութիւն էր թողել հանդի-
կանների վրա: Սովորաբար լաւ էր Պետրոսեան:
Հանդիսականները երկար ծափահարութեամբ
վարձատրեցին զերաւատարներին, մանաւանդ
օր. Խիթաբեանին և տ. Զաբէլին, որի բէնէֆիտն

էր և որ Սիւրկինի չարածձի դերում բաւական ծի-
ծաղեցրեց ու 40 ռուբլու դրամական նուէր
ստացաւ: Թատրոնը գրեթէ լիքն էր: Զը նայած
որ ներկայացման սկիզբը նշանակված էր ճիշդ
8 ժամին, բայց 8 1/2-ին դահլիճում միայն հինգ
մարդ կար, այնպէս որ խեղճ զերաւատարները
ժամերով պիտի սպասէին հանդիսականներին:
Ամսիս 29-ին խումբը ի նպատակ պ. Աղայեանի
պիտի խաղայ առաջին անգամ մեր քաղաքում
«Մի կնոջ տանջանք» և Շիլլերի «Աւաղակներէր»
վերջին կտորը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փրանսիական արտաքին գործերի մինիստր
Դէլկասէի Պետերբուրգ գնալու վրա ուշադրու-
թիւն է դարձրել համարեա ամբողջ եւրօպական
մամուլը: Ներօպական լրագիրներից ամեն մէկը
պիտատում է այդ այցելութեան խորհուրդը բա-
ցատրել, ի հարկէ, իր տեսակէտից: Փրանսիա-
կան արտաքին գործերի մինիստրութեան օրդան
«Courrier du Soir» լրագիրը ասում է, թէ Ռու-
սաստանի և Փրանսիայի յարաբերութիւնները
ոչինչով չեն փոխվել, մինիստրը միայն ցանկա-
ցել է այցելութիւն անել, բայց մինչոյն ժամա-
նակ, աւելացնում է լրագիրը, դրանով, ի հար-
կէ, չի վերջանայ նրա այցելութիւնը, նա կա-
մենում է խորհրդակցել իր ընկերոջ հետ ուս-
սաց Կայսրի 1900 թ.ին Փրանսիական ցուցա-
հանդէսը այցելելու առթիւ: Հաւանական է,
որ այդ ժամանակ խօսք բացի ի նաև ընթացիկ
հարցերի մասին, որոնք այն հետեանքը կարող
են ունենալ, որ ժամանակաւոր համաձայնու-
թիւն կը կայանայ ցամաքային Ներօպայի հետ՝
խաղաղութեան վտանգ սպառնող ձգտումների
դէմ: «Journal des Debats» լրագիրը ասում է,
որ Դէլկասէ այցելութիւն տալով կամ Մուրա-
վիսկին՝ մի այնպիսի բնական ընթաց է անում, որ
կարելի էր միանգամայն դուրս ձգել ուրիշ բա-
ցատրութիւններ: Այնու ամենայնիւ, շարուն-
ակում է լրագիրը, վերջինս ժամանակներս
Վիլնիւմ կայսրի Փրանսիական նաւը այցելելը
տեղիք տուեց զանազան լուրերի, որպէս թէ
այդ դէպքը կարող է աննպատակ հետեանքներ
ունենալ Փրանս-ուսական յարաբերութիւնների
համար: Դէլկասէի այցելութիւնը ապացուցա-
նում է, որ Փրանսիայի և Ռուսաստանի յարա-
բերութիւնները եթէ նոյն իսկ մի փոքր վնասված
լինէին, արտաքին գործերի մինիստրը այդ միջո-
ցին յարմար չէր համարի այցելութիւն գնալու:
Պետերբուրգ: «Petit Journal» լրագիրը ասում է,
որ Դէլկասէ Պետերբուրգ գնալով՝ կամենում է
քողարկել անխորտակելի: «Echo de Paris» լը-
րագիրը, որ ամեն բանի մէջ Դրէֆուսի հետոյն
է տեսնում, ասում է, որ այդ այցելութիւնը
կապ ունի Դրէֆուսի գործի հետ, և որ զլիսա-
ւորն է՝ այն մերկացումների հետ, որը արել է
Բօրէպէլը՝ Դրէֆուսի Ռուսաստանում կատարած
դերի մասին:

—Սերբիայից հաղորդում են արտասահմանի
թերթերին, թէ գնդապետ Նիկոլիչ և նախկին
արմատական մինիստր Տաուշանովիչ խոստովա-
նել են, թէ իրանք մասնակցել են Միլանի դէմ
եղած դաւադրութեան:

—«Corriere della Sera» հաղորդում է, թէ
Իտալիան հրաժարվել է Չինաստանում որ և է
նաւակայան ձեռք բերելու մտքից:

—«Figaro»-ի տեղով, Դրէֆուսի պաշտպան-
ները վճռել են զիմել Բենիի զինուորական դա-
տարանի նախագահին, ինքընդիւմ ճշմարտութիւ-
նը երևան հանելու համար: Հարց ու փորձի են-
թարկել Բօրէպէլից ցոյց տուած բոլոր վկայներին:

—Փրանսիայում անկողնիապա՝ մարդիկ մեծ
կասկածով են վերաբերվում այն լուրին, թէ
իբր գնեցրաւ Մերսիէ յայտնելու է դատարա-
նում, թէ Դրէֆուսի լրտես լինելը ինքը իմա-
ցել է, ի միջի այլոց, գերմանական զեւսկան
Միւնստերից:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրի Պարիզի թղթակիցը հետեւեալ
մանրամասնութիւններն է պատմում Սան-Պո-
մինգոի սպանուած նախագահի մասին. «Նա
հնգր էր, առանց որ և է կրթութեան, բայց ու-
նէր բնական խելք և մի առանձին եռանդ ու
ձգտում զէպի ուսում: Նա փոքր առ փոքր կա-
րողացաւ յաղթել զժողովրդիւններին և բաւա-
կանին ծանօթանալ՝ Փրանսիական, անդլիական
և պօրտուգալական լեզուներին: Նա շատ հա-
մեստ էր և չափաւոր, շատ ըջով էր բաւակա-
նանում, բայց երբ բարձրատիման հիւրեր էր
ունենում, նա չէր խնայում ոչինչ իր հիւրերին
հիւրասիրելու համար, բերել էր տալիս Նիւ-
Բօրից զանազան խմիչքներ և քաղցրեղէններ:
Նա միշտ երկիւղ էր կրում, որ պէտք է սպան-
վի: Նա շատ անդամ հագնում էր աղջտուի շո-
րեր և պտտում քաղաքում: Այդ դէպքում նրան
հետեւում էին հեռուից ոստիկան-կանայք, որով
հետեւ նա կանանց աւելի էր հաւատ ընձայում,
քան թէ տղամարդկանց: Իր տան մէջ նա ամե-
նախաժողով կարգապահութիւն էր պահպանում:
Մէկ անգամ, երբ նրա 24 տարեկան որդին, ո-
րը ուսանում էր Պարիզում բժշկութիւն, տուն
վերադարձաւ առանց իր թղթուղթեան, նա
խկին որդուն երկու ամսով ուղարկեց սեփա-
կան նաւով ճանապարհորդելու, հասարակ նա-

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.